ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 16

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ 04.06.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Որոշեց

1.Մրգանուշ համայնքի ավագանու 23.10.2019 թվականի թիվ 32 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2.Մրգանուշ համայնքի Նար-Դոսի 30/1 հասցեի 542 քմ հողամասը ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին

3.Մրգանուշ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության,ծավալի,պայմանների և իրականացման կարգը հաստատելու մասին

4.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կարգը հաստատելու մասին

5.Մրգանուշ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները հաստատելու մասին

6.Մրգանուշ համայնքի ավագանու 08.12.2020թվականի թիվ 31 որոշման մեջ լրացում կատարելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 17

ԱՎԱԳԱՆՈՒ 23.10.2019Թ-Ի ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով `

Որոշեց

Մրգանուշ համայնքի 23.10.2019 թվականի թիվ 32 որոշման առաջին պարբերության մեջ <<Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի կատեգորիայի 0.096հա /ծածկագիր 03-060-0030-0003/հողամասը օտարել աճուրդային եղանակով և 0.257հա /ծածկագիր 03-060-0003-0074/արտադրական նշանակության հողամասը մրցութային կարգով վարձակալության տրամադրել>> և երրորդ պարբերության <<0.257 հա արտադրական նշանակության հողամասը մրցութային կարգով վարձակալության տրամադրել 25 տարի ժամկետով>>նախադասությունների վերջում ավելացնել<<առանց կառուցապատման իրավունքի>>բառերը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈՒԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 18

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՐ - ԴՈՍԻ 30/1 ՀԱՍՑԵԻ 542ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 48-րդ կետի դրույթները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով՝

Որոշեց

1.Տալ համաձայնություն՝ Մրգանուշ համայնքի Նար-Դոսի 30/1 հասցեի 542քմ հողամասը ընդլայման կարգով,ուղղակի վաճառքի ձևով 661.782/վեց հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր ութսուներկու /ՀՀ դրամ արժեքով համագյուղացի Էդիկ Ղարիբյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 19

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ և ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ,ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջներով

Որոշեց

Հաստատել Մրգանուշ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկատգման էության,ծավալի,պայմանների և իրականացման կարգը, համաձայն հավելված 1-ի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգանուշ համայնքի ավագանու 2021 թվականի
հունիսի 4-ի № 19 –Ն որոշման

ԿԱՐԳ

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով /այսուհետ՝ Կարգ/ սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը /այսուհետ՝ պարտադիր բարեկարգում/:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Խաչփար համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Մրգանուշ համայնքի վարչական տարածքում գտնվող առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների, բացօթյա շուկաների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝
1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,
2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,
3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» № 596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Մրգանուշի համայնքապետարանի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

9. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝
1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,
2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.
ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը,
բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,
գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,
դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,
ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

10. Մրգանուշ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

11. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

12. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

13. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:
14. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝
1) կրպակների, տաղավարների, առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
2) առանձնատների համար՝ հողամասի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
3) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
4) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-5-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ՄԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 20

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով

Որոշեց

Հաստատել Մրգանուշ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կարգը,համաձայն թիվ 2 հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈՒԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 2
Մրգանուշ համայնքի ավագանու
2021 թվականի հունիսի 4-ի N 20-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Մրգանուշ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

հանրային սննդի ծառայություն սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

Ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրականացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք, համայնքի ղեկավարի կողմից հաստատված և անհատ ձեռնարկատերերին և /կամ/ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

8. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

11. Առանձին շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

12. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

13.Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

14. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

15. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

16. Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

17.Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

18.Աշխատողներից բարմենը, խոհարարը, հրուշակագործը, մատուցողը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

19. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

20. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

21. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

22. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 21

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով

Որոշեց

Հաստատել Մրգանուշ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները ,համաձայն թիվ 3 հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈՒԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 3
Մրգանուշ համայնքի ավագանու
2021 թ.հունիսի 4-ի
№ 21-Ն որոշման

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում է Մրգանուշ համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման կարգն ու պայմանները, ծավալը, քանակությունը, արտաքին գովազդի տեղադրման այլ չափորոշիչները, տեղադրման թույլտվության տրամադրման կարգը, գովազդի համար սահմանված տեղական տուրքերի վճարման կարգը և պայմանները:

2. Համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրումն իրականացվում է «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի ու կանոնների պահանջներին համապատասխան:

3. Համայնքի տարածքում գովազդի տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը: Արտաքին գովազդի տեղադրման համար իրավաբանական կամ ֆիզիկական անձը /այսուհետև՝ դիմող/ համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա/ դիմում համայնքապետի անունով,

բ/ արտաքին գովազդի նախատեսվող էսքիզը, տեղադրման տարածքի հատակագիծը, որտեղ պետք է նշված լինի գովազդային վահանակի փաստացի տեղադրման վայրը,

գ/ գովազդատու իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի պատճենը/ ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը,

դ/ ճանապարհների վրա արտաքին գովազդի տեղադրման դեպքում երթևեկության անվտանգության մասով գրավոր համաձայնություն ոստիկանության պետավտոտեսուչներից՝ ներկայացված հատակագծի վրա համապատասխան նշումով,

ե/ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների արտաքին գովազդի դեպքում առողջապահության նախարարության թույլտվությունը:

4. Համայնքապետարանի աշխատակազմը սույն կանոնների 3-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում իրականացնում է.

ա/ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն,

բ/ գովազդի տեղադրման վայրի զննում,

գ/ տեղադրվող գովազդի համապատասխանությունը գործող պահանջներին,

դ/եզրակացության կազմում:

5. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման մասին դիմումի բավարարումը կամ մերժումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ:

6. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման դեպքում դիմումատուին տրամադրվում է գովազդի էսքիզի հաստատված տարբերակը՝ ստորագրված և կնքված համայնքի ղեկավարի կողմից, անհրաժեշտության դեպքում նաև տեխնիկական պայմաններ, որտեղ նշվում է արտաքին գովազդի տեղադրման աշխատանքներն իրականացնելու ժամկետները:

7. Արտաքին գովազդի տեղադրման դիմումը կարող է մերժվել, եթե՝

ա/ ներկայացված փաստաթղթերը թերի են և դրա մասին պատշաճ ձևով նախազգուշացումը համայնքապետարանի աշխատակազմի կողմից ծանուցվելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում դիմողը չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը կամ նյութերը,

բ/ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ սույն կանոնների պահանջներին,

գ/ արտաքին գովազդը տեղադրվելու է ճանապարհի վթարավտանգ հատվածների, կամուրջների, հենապատերի, ծառերի կամ ժայռերի վրա և այլ դեպքերում:

8. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառներն ու մերժման համար հիմք հանդիսացող իրավական հիմքերը:

2.ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Գովազդային վահանակի հենասյունը պետք է պատրաստվի այնպիսի նյութերից, որ քամու կամ կողմնակի ազդեցության հաշվարկային բեռնվածության տակ և շահագործման ընթացքում ապահովվի բավարար կայունություն:

10. Ճանապարհի բաժանարար գոտում գովազդային վահանակի տեղաբաշխման ժամանակ.

ա/ բաժանարար գոտում գովազդի հենասյունը պետք է պաշտպանվի երկկողմանի ճանապարհային պաշտպանիչներով,

բ/ եթե գովազդային վահանակի լայնությունը գերազանցում է բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 6 և ավելի մետր բարձրության վրա,

գ/ եթե գովազդային վահանակի լայնությունը չի գերազանցում բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 2.5 և ավելի մետր բարձրության վրա:

11. Գովազդի լուսավորությունը՝

ա/ լուսավորության համար թույլատրվում է օգտագործել հակահրդեհային անվտանգության պահանջները բավարարող էլեկտրական լուսավորման սարքեր,

բ/ լուսավորման սարքերի ամրացումը պետք է ապահովի դրանց հուսալի միացումը գովազդային կառուցվածքի հետ այնպես, որ դիմանան ձյան և քամու ազդեցության բեռնվածությունների, տատանվող և հարվածային ազդեցությունների,

գ/ երթևեկության մասնակիցներին չկուրացնի լույսով, այդ թվում և անդրադարձով,

դ/ շարժվող տարրեր պարունակող գովազդային պատկերների օգտագործումը գովազդային վահանակի վրա պետք է իրականացվի այնպես, որ գովազդային տեղեկությունը միաժամանակ ամբողջությամբ հայտնվի գովազդային վահանակի վրա,

ե/ լուսավորությունը պետք է իրականացվի փողոցային արտաքին լուսավորության հետ միասին:

12. Ճանապարհին տեղադրված գովազդը պետք է ապահովի՝

ա/ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների տեսանելիությունը և երթևեկության մասնակիցների կողմից դրանց ընկալումը,

բ/ կառույցի իրական չափերը չփոքրացնեն ինժեներական կառույցների թռիչքային շինությունները ճակատային մասի վրա տեղադրելու դեպքում,

գ/ հետիոտների կողմից այն ընկալելը՝ առանց ճանապարհի երթևեկելի մաս դուրս գալու:

13. Գովազդակիր կազմակերպությունն ապահովում է գովազդային վահանակի պատշաճ վիճակը/ ժամանակին ներկել, փոխել պատռված պաստառները և այրված լամպերը/:

14. Գովազդակիր կազմակերպությունն իր ցանկությամբ իրավունք ունի փոխելու գովազդային վահանակի պաստառը, դրա մասին 7 օր առաջ տեղյակ պահելով համայնքի ղեկավարին:

3. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱԿԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ

15. Դիմողը տեխնիկական պայմանների հիման վրա կատարում է գովազդի տեղադրման աշխատանքները, ներկայացված նախագծերին համապատասխան և տեղեկացնում համայնքապետարանի աշխատակազմին՝ աշխատանքների ավարտի մասին, որից հետո համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցն իրականացնում է կատարված աշխատանքների ուսումնասիրություն:

16. Կատարված աշխատանքները սույն կանոնների պահանջներին և ներկայացված նախագծերին համապատասխանության դեպքում, եթե կատարվել են նաև գովազդային վահանակի շինարարական աշխատանքներ, համայնքապետարանի կողմից կազմվում է շինարարական աշխատանքների ավարտման ակտ:

4. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

17. Արտաքին գովազդի տեղադրման աշխատանքների ավարտի փաստագրումից հետո հաջորդող օրվանից սկսած իրականացվում են սահմանված տեղական տուրքերի հաշվառումը և գանձումը:
18. Դատարկ գովազդային վահանակը հետագայում գովազդով համալրելու դեպքում գովազդատուն պարտավոր է այդ մասին նախօրոք տեղեկացնել համայնքապետարան, որից հետո կատարվում է տեղական տուրքի վերահաշվարկ՝ ավագանու կողմից ընդունած տեղական տուրքերի չափերին համապատասխան:

5. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ Ը ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼԸ

19. Արտաքին գովազդի տեղադրման թույլտվությունը չեղյալ է համարվում հետևյալ դեպքերում, երբ՝

ա/ գովազդատուն խախտել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, գովազդի վերաբերյալ այլ իրավական ակտերի և սույն կանոնների պահանջները,

բ/ խախտվել է թույլտվության և տեխնիկական պայմաններով ժամկետները կամ պահանջները,

գ/ չվճարված տեղական տուրքի չափը գերազանցում է համապատասխան տեղական տուրքի 3 ամսվա չափը,

դ/ գովազդատուն ներկայացնում է գրավոր դիմում:
20. Արտաքին գովազդի տեղադրման թույլտվությունը չեղյալ համարելու դեպքում գովազդատուն սեփական միջոցների հաշվին պարտավոր է գովազդի տեղադրման համար հատկացված հատվածը/տարածքը/ բերել նախկին տեսքի:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 22

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

Որոշեց

Ավագանու 08.12.2020 թվականի թիվ 31 որոշման <<16) ենթակետ>>ից հետո ավելացնել նոր կետեր՝

<<2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ Մրգանուշ գյուղական համայնքում ավագանու որոշմամբ կիրառված է 0,5 գործակից:>>

<<3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով սահմանված դրույքաչափի նկատմամբ Մրգանուշ գյուղական համայնքում ավագանու որոշմամբ կիրառված է 0,75 գործակից, առաջնորդվել են գոտիավորման սկզբունքից /առաջին գոտի/:>>

<<4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-10 և 12-16 ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ Մրգանուշ գյուղական համայնքում ավագանու որոշմամբ կիրառված է 0,3 գործակից :>>

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈՒԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**